

ИСТОРИЯ

Հայկական հարցը և Հայ Սահմանադրական ռամկավարները

Մարգարյան Սուրեն Թ.

պ.գ.դ., պրոֆեսոր, առաջատար գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, ՀՀ)
sargsyansuren@yandex.ru

ՀՏԳ՝ 355/359:930(479.25); EDN: THFSVR

Հանգուցաբառեր` Արևելյան հարց, Բեռլինի վեհաժողով, Հայկական հարց, Հայ Սահմանադրական Ռամկավար կուսակցություն, ազատագրական պայքար, արևմտահայություն, ծրագիր, կուսակցական մամուլ, տեսակետ

The Armenian Question & The Armenian Constitutional Ramkavars

Sargsyan Suren T.

Doctor of Historical Sciences, Professor, Leading Researcher, Institute of history of NAS RA (Yerevan, RA)
sargsyansuren@yandex.ru

Abstract. In 1908 y. As a result of the merger of the Armenakan and the reorganized Gnchak parties, the Armenian Constitutional Party Ramkavar (hereinafter-ACPR) was created, whose political credo became the universal principles of equality, freedom, the rule of law and the national improvement of the life of the Armenian people and the achievement of the right to live humanly: 1912-1914 After the opening of the Armenian issue, all political forces, including the RSPP, were consistent in a fair solution to the issue.

In accordance with the provisions of the ACPR program, the parties "Van-Tosp", "Azg", "Arev" and other official newspapers published articles in which they showed the roots of the Armenian question and the provisions of its solution acceptable to the Armenian people

Keywords: Eastern question, Berlin Assembly, Armenian question, Armenian Constitutional Party Ramkavar, liberation struggle, Western Armenians, program, party press, point of view

Армянский вопрос и Армянские Конституционные Рамкавары

Саргсян Сурен Т.

д.и.н., профессор, Институт истории НАН РА (Ереван, РА)
sargsyansuren@yandex.ru

Аннотация. В 1908 г. В результате слияния арменаканской и реорганизованной Гнчакской партий была создана армянская Конституционная партия Рамкавар (далее-АКПР), политическим кредо которой стали общечеловеческие принципы равенства, свободы, верховенства закона и национальное улучшение жизни армянского народа и достижение права жить по-человечески. 1912-1914 гг. после открытия армянского вопроса все политические силы, в том числе и АКПР, были последовательны в справедливом решении вопроса. В соответствии с положениями программы АКПР партии «Ван-Тосп», «Азг», «Арев» и другие официальные газеты публиковали статьи, в которых показывали корни армянского вопроса и приемлемые для армянского народа положения его решения.

ключевые слова: Восточный вопрос, Берлинская ассамблея, Армянский вопрос, армянская Конституционная партия Рамкавар, освободительная борьба, западное армянство, программа, партийная пресса, точка зрения

XX դարի սկզբին գիտարդյունաբերական բուռն ու աննախադեպ զարգացող աշխարհում տեղի ունեցած տեղաշարժերի արդյունքում մարդկությունը վայրի մոլուցքով նետվեց աշխարհը վերաբաժանելու: Միմյանց բախվեցին երբեմնի բարեկամները, հանուն նյութական շահերի միավորվեցին դարավոր թշնամիները: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագրով, ապա բեռլինյան վեհաժողովում բանաձևված Հայկական հարցը դարձավ միջազգային դիվանագիտության խաղաթուղթ, որը եվրոպական մեծ տերություններն սկսեցին օգտագործել «հիվանդ ծերունի» Օսմանյան կայսրությունից պատահներ պոկելու համար:

Վաստակաշատ Լեոն ասում էր` Հայկական հարցն այնքան հին է, որքան հայ ժողովուրդը: Մենք պատմության ընթացքում այնքան ենք ճգնվել, կծկվել ու փոքրացել, չափից ավելի կորցրել, որ հիմա դրա իրավունքն այլևս չունենք: Այսօր ավելի քան համոզիչ է դառնում մարդկության «Պարույրաձև» զարգացման թեզը, որը հուշում է, թե ամեն անգամ պատմությունը կրկնվում է, բայց` նոր մակարդակում: Հայ ժողովրդի ու Հայկական հարցի պատմության տեսանկյունից այդ թեզն ամբողջովին քննություն է բռնում: Մեզ մնում է ավելի խելամիտ գործել, իրատես լինել, համամարդկային արժեքներին դավանել, բայց երկաթե շերեփի մասին չմոռանալ:

XX դարի սկիզբին թուրքական հայաստյաց քաղաքականությունից խիստ թուլացած, Հայկական հարցի քողի տակ մանրադրամի դերակատարի վերածված հայ ժողովուրդն աշխարհակործան մարտահրավերներին դեմ առ դեմ կանգնեց միայնակ: Մակայն կարողացավ արագ սթափվել և ստեղծված իրավիճակից դուրս գալու ուղիներ փնտրել: Հայկական հարցը մեզանում վատ չի ուսումնասիրված, սակայն ավանդական կուսակցությունների կողմից դրան վերաբերմունքի կտրվածքով՝ գրեթե ոչինչ արված չի:

* * *

Իբրև Արևելյան հարցի բաղկացուցիչ մաս, Հայկական հարցը դիվանագիտական փաստաթղթի տեսքով ձևակերպվեց 1878 թ. փետրվարի 19-ին (մարտի 3-ին) Ման Ստեֆանոյի հաշտության պայմանագրի 16-րդ և Բեռլինի 1878 թ. հունիսի 1(13) վեհաժողովի 61-րդ՝ հոդվածներով: Այնուհետև այն հաճախ բուռն քննարկումների և հուսախաբությունների առիթ դարձավ, ինչպես նաև՝ ազատագրական պայքարի վերելքների ու փառապանծ հաղթանակների աղբյուր:

Բեռլինի վեհաժողովից հիասթափված Հայաստանում մեկը մյուսի ետևից ասպարեզ իջան ազգային կուսակցությունները՝ 1885 թ.՝ Արմենականը, 1887 թ.՝ Հնչակյանը և 1890 թ.՝ Հայ Յեղափոխական Դաշնակցությունը: Դրանց հիմնական նպատակը հայ ժողովրդին թուրքական բռնատիրությունից ազատագրելն էր, այսինքն՝ Հայկական հարցը լուծելը: Նրանց ծրագրերի միջև եղած տարբերությունը տուսկ այդ ազատությանը հասնելու միջոցների մեջ էր:

1908 թ. Արմենական և Վերակազմյալ Հնչակյան կուսակցությունների միախառնումով ստեղծվեց Հայ Մահմանադրական Ռամկավար կուսակցությունը (այսուհետև՝ ՀՍՌԿ), որի քաղաքական հավատամքը համամարդկային՝ հավասարություն, ազատություն, օրենքի գերակայություն սկզբունքները և ազգային՝ հայ ժողովրդի կյանքի բարեկամումն ու մարդավայել ասպրելու իրավունքի նվաճումը դարձան:

Թուրքական մշտակեղծ քաղաքականության պայմաններում առաջին շրջանում կուսակցությունը փորձում էր ուժեղանալ և պաշտպանել հայության շահերը, սակայն պետության բռնատիրական և քաղաքական անհանդուրժողական կեցվածքը մամլիչի տակ էին պահում կուսակցության կառույցները և նա ստիպված գործում էր Պատրիարքարանի հովանու ներքո:

1912-1914 թթ. Հայկական հարցի վերաբացվելուց հետո բոլոր քաղաքական ուժերը, այդ թվում և ՀՍՌԿ-ն, հետամուտ էին հարցի արդարացի լուծմանը: Հարցը տեղ գտավ կուսակցության ծրագրային փաստաթղթերում, բազմիցս քննարկվեց ընդհանուր պատգամավորական և այլ մակարդակի ժողովներում: ՀՍՌԿ-ն որդե-

գրել էր արմենական տեսաբաններից Սեպուհի ձևակերպման ոգին: Այն էր՝ Հայկական հարցն առաջացել է պատմականորեն, իսկ արևմտահայությունը երկար ու համբերատար սպասել է նրա լուծմանը, սակայն ապարդյուն, որովհետև սուլթանական կառավարությունը զանց առավ այն: Ուստի հայն «*իրատունք ուներ սպաստանքելու: Միայն հարկատր էր ոյժ գոյացունել, քանի որ գաղափարական շենքը իրական հողի վրայ պիտի կառուցանել և ոչ թե՛ օղի մէջ*» [1, էջ 170]:

ՀՍՌԿ ծրագիրը կայսրության մեջ բնակվող ժողովուրդների գոյության ապահովման երաշխիքներ էր համարում զանազան արտոնությունների վերացումը, թափառաշրջիկ և պարագիտ ասրելաձև ունեցող ցեղերի զինաթափումն ու նստակյաց դարձնելը, «ջնջել համիդիե գորագունդերը» [5, էջ 30]: Ընդգծենք, որ ռամկավար առաջնորդները բացառապես արևմտահայեր էին, քաջածանոթ թուրքական դժնդակ իրականությանը և ծրագիրը գրելիս, անկասկած, հաշվի էին առել այն բոլոր հնարավորություններն ու խոչնդոտները, որոնք կնպաստեին կամ կարգելակեին իրենց մտադրությունների իրականացմանը: Գտնվելով իրադարձությունների կիզակետում նրանք չէին կարող առաջարկել իրականությունից կտրված ու անիրագործելի ծրագրեր:

1912 թ. ՀՍՌԿ Վասպուրականի շրջանի պաշտոնաթերթ «Վան-Տոսպը» հաճախ էր անդրադառնում Հայկական հարցին: Գրեթե չկար համար, որտեղ անդրադարձ չլիներ դրան: Ռամկավարները, հաշվի առնելով անցյալի դառը փորձը, ի սկզբանե որոշակի վերապահումով էին մոտենում հայկական գավառներում բարենորոգություններ կատարելու թուրքական իշխանությունների խոստումներին: «Վան-Տոսպի» խմբագրականներից մեկում ընդգծվում էր, որ ամեն անգամ, երբ բարձրացվում է բարենորոգումների հարցը, թուրքական պաշտոնական շրջանները հանգստացնում էին ժողովրդին՝ ասելով. «Սպասեցեք քիչ մը, պատերազմը անցնի, անգամ մը ինքզինքնիս գտնենք, յետոյ Ձեր մասին բան մը կընենք անպատճառ»¹:

Պարբերականի Հրագրան հոդվածագիրը Հայկական հարցի վերաբացումը հայության համար վտանգավոր էր համարում և անսքող ակնարկում էր, որ դեռ 1890-ական թթ. սկսած,

¹ Պարբերականը՝ որպես կիսամյա գիտական, կրոնական հանդես, լույս է տեսել 1911-1914 թթ. Վանում: 1912 թ. սկսվում է թերթի Նոր շրջանը: Այն դառնում է ՀՍՌ կուսակցության Վասպուրականի շրջանակի պաշտոնաթերթը: Խմբագիրն էր Նշան Հակոբյանը, սպա Վարդան Պապիկյանը: Այնուհետև՝ 1915-1918 թթ.՝ որպես Հայ Ռամկավարների պաշտոնական օրգան, լույս է տեսել Թիֆլիսում: Պատասխանատու խմբագիրն էր Արտակ Գարբիյանը: 1919 թ. հասարակական, քաղաքական, գրական այդ շարաթաթերթը տեղափոխվում է և վերանվանվելով «Հայաստանի ձայն», սկսում լույս տեսնել Երևանում: [4, էջ 90]:

Հայկական հարցի բուռն քննարկումներին միշտ հաջորդել են հայերի ջարդեր և հիմա էլ,- գրում է նա,- մարգարե դառնալու կարիք չկա գուշակելու համար «արիւնոտ դէպքերու մեծ հաւանակաւնութիւնը» [12, 1912, թիվ 28, էջ 20]: Պարբերականի մեկ այլ համարում թղթակիցը վկայակոչելով մի թուրք սպայի գինվորական վարժարանում արած հայտարարությունը՝ «Պատէրագմեն յաղթական ելնենք, թե ոչ, գիտենք ինչ դաս պիտի տանք անհաստարիմ հայերուն և քիչտերուն» [12, 1912, թիվ 2, էջ 35] լրջորեն զգուշացնում էր մոտալուտ վտանգի մասին: Թեև «Վան-Տոսպի» հայտնած այս տեսակետը հեռու չէր ճշմարտությունից, սակայն, քանի որ Հայկական հարցը վերաբացվելու էր Ռուսաստանի նախաձեռնությամբ, դրա համար էլ մեր ազգային շրջանակները դրական հույսեր էին փայփայում:

Ռամկավարները դեմ էին հեղափոխական ելույթներին և պաշտպանում էին օսմանյան ժողովուրդների հետ խաղաղ զարգացման գաղափարը: Իրականում թուրքական բռնապետության մամիչի պայմաններում գործող արևմտահայ քաղաքական ուժերի մեծ մասը հարկադրված եղավ կանգնել իշխանության կողմը, քարոզելով հայ բնակչությանը պաշտպանել օսմանյան հայրենիքը:

Ռամկավարները տալիս էին Հայկական հարցի լուծման իրենց բանաձևը, որն ամբողջանում էր «կեանքի, գոյքի և պատուի անձեռնմխելիության արքայան իրաւունքի» մեջ [12, 1912, թիվ 1, էջ 2]: ՀՍՌԿ-ի տեսաբանները գտնում էին, որ իրենց պահանջներն օգտակար են ոչ միայն հայերին, այլև նրանց հարևաններին. «Մենք սպաստամբներ չենք և Հայկական հարցը անջատողական շարժում մը չէ եղած երբեք, մեր պահանջները տարրական արդարության պահանջներ են, որոնց իրագործումով հաստատու պիտի օգտուին նաև քուրդ ու թուրք ժողովուրդները և ի վերջո ամբողջ պետությունը» [12, 1912, թիվ 2, էջ 35]:

Օրեցօր վտանգավոր դարձող զարգացումներին հետևելով և խոսքն ուղղելով իշխանություններին՝ ռամկավարներն անհրաժեշտ էին համարում հաճախ կրկնել. «Մի անգամ ընդմիջտ կը հայտարարենք, լավ մտիկ ըրեք, հայ ազգը դժգոհ է, քայց ոչ սպաստամբ», թե նա ամբողջ 30 տարվա ընթացքում ուրիշ նպատակ չի ունեցել, քան հայ ցեղի ինքնուրույն կուլտուրական զարգացումը նորոգումն ու բարեկարգ օսմանյան պետության մէջ... այս է եղած մեր ազգային նշանաբանը» [12, 1912, թիվ 4, էջ 40]:

Ընդհանրապես, երբ թուլանում էին Օսմանյան կայսրության դիրքերը, հայության մոտ արթնանում էին թուրքական լծից ազատագրվելու հույսերը: Այսպիսի իրավիճակ առաջացավ նաև 1911 թ. թուրք-իտալական և

Բալկանյան պատերազմների ժամանակ: Այդ հույսերը իսպառ վերացնելու նպատակով թուրքական իշխանությունները Բալկանյան թերակղզուց խուճապահար գաղթող և քրիստոնյա հպատակների հանդեպ կատաղի ատելությամբ լցված մահմեդականներին բնակեցնում էին հայկական վիլայեթներում, սրելով առանց այդ էլ այնտեղ վաղուց գոյություն ունեցող հակամարտությունները: Հետո պատերազմներում կրած պարտության մեղքերն իշխանություններն սկսեցին վերագրել հայ բնակչությանը: Այդ հակահայկական մթնոլորտը խիստ անհանգստացնում էր ՀՍՌԿ-ին ու ստիպում նրան փրկության միջոցներ որոնել: Ի դեպ, այդ շրջանում առաջացել էին Հայկական հարցի վերաբացման համար բոլոր անհրաժեշտ նախադրյալները. ա) Բալկանյան պատերազմում Թուրքիան պարտվել էր, բ) մեծ տերությունները հետաքրքրված էին դրա արդյունքներով, գ) Ռուսական դիվանագիտությունն ընդգծված բարյացկամ վերաբերմունք էր դրսևորում Հայկական հարցի նկատմամբ, դ) Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ 5-րդը 1912թ. հոկտեմբերի 15-ին, ապա դեկտեմբերի 24-ին դիմեց ռուսական իշխանություններին Լոնդոնում գումարված դեսպանաժողովում Հայկական հարցը պաշտպանելու խնդրանքով, ե) նոյեմբերի 10-ին վեհափառը հատուկ կոնդակով Պողոս Նուբարին լիազորեց Բեռլինի համաձայնագիրը ստորագրած պետությունների առջև բարձրացնել Արևմտյան Հայաստանում բարենորոգումների խնդիրը: Այդ ժամանակվանից Ազգային պատվիրակությունը գտնվում էր Փարիզում և արտահայտում հայ ժողովրդի հավաքական շահերը:

1913 թ. հուլիսին Կ. Պոլսում տեղի ունեցավ ՀՍՌԿ երկրորդ ընդհանուր պատգամավորական ժողովը: Համագումարում ի գիտություն ընդունվեց այն իրողությունը, որ 1912 թ. Հայկական հարցի վերաբացվելուց հետո, միջազգային տարբեր առյաններում հայոց շահերը ներկայացնում էր կաթողիկոսի ներկայացուցիչ Պ. Նուբարի պատվիրակությունը, որի գործունեությունը որոշակի հույսեր էր ներշնչում, սակայն մեծ տերությունների մրցակցությունը կարող էր ավելի վատթարացնել հայերի վիճակը [1, էջ 231]: Դրանից ելնելով էլ ռամկավարները կոչ արեցին առավել զգույշ լինել: Ընդունվեցին մի քանի կարևոր որոշումներ՝ ա) սպասել մեծ տերությունների Հայկական հարցի վերաբերյալ մոտալուտ հաշտության վեհաժողովի որոշումներին, բ) «Արևելեան նահանգներում զարկ տալ ինքնապաշտպանութեան գործին» [1, էջ 235], գ) հայաշատ երկրներում ձեռնարկել բացատրական աշխատանքներ, լուսաբանել պահի լրջությունը, Հայկական հարցի վիճակը և օրախնդիր շատ այլ հարցերի վերաբերյալ ՀՍՌԿ-ի տեսակետները:

Կուսակցության մեկ այլ պաշտոնական օրգան «Ազգը» նշում էր, որ քանի դեռ հայ ժողովուրդն իր սեփական ճակատագրի դեկր չի վերցրել իր ձեռքը, ամբողջ ուժը չի կենտրոնացրել դրա շուրջը, «*Հայկական հարցը ամեն ատեն տառապանքի, արիւնի և աւերի գնով երևան պիտի գայ պետությունց մասնաոր շահերուն ծառայելու համար: Պէտք է մեկընմիշտ իմանանք, - ասվում էր թերթի խմբագրականում, - որ մարդկային ու ազգային բոլոր իրաւունքները հիմնուած են շահի վրայ ու զանոնք ձեռք ձգելու համար սեփական ուժն է միակ դարմանն ու միջոցը, ուժ խելքի, ուժ արտի, ուժ շրջահայեցութեան, ուժ բազուկի ու զէնքի» [6, 1914, հունվարի 7, թիվ 31]: Միաժամանակ, խմբագրականում չէր անտեսվում արտաքին օգնության կամ դիվանագիտական աջակցության կարևոր դերակատարությունը:*

Ռամկավարներն սկզբում դրական վերաբերվեցին 1914 թ. հունվարի 26-ի մեծ տերությունների ընդունած բարենորոգումները՝ բնութագրելով այդ ծրագիրը որպես «հաջող վերջավորություն»: Նրանք գրում էին, թե հայ ժողովուրդն «այսօր ուրեմն կրնա քիչ մը ավելի յույսով ու վստահությամբ նայիլ սպագային...» [1, էջ 235]: Բայց հետո թերհավատությամբ լցվեցին այդ ծրագրի հանդեպ: Այա կանգնելով չեզոք դիրքում, այնուամենայնիվ, չցանկացան վատատես լինել: «*Չենք կրնար գուշակել, - գրում էին նրանք «Ազգում», - թե սպագայ պիտի ունենա, որչափ տոկուն ու տևական պիտի ըլլա ծրագիրը, բայց պետք է որ առանց հոռետեսությամբ քիչ մը յույսով նայինք անոր վրա և մեր կողմէ աշխատինք դյուրացնել անոր գործադրությունը» [6, 1914, հունվարի 7, թիվ 31]:*

Կուսակցության որոշումներն ու որակումներն ակնհայտորեն անորոշ էին ու հեղիեղուկ, քանի որ ռամկավարները փնտրտուքի մեջ էին և հայկական նահանգներում բարենորոգումների անցկացումը, միաժամանակ կապում էին թե՛ մեծ տերությունների, թե՛ իթթիհադական կառավարության հետ:

Ռամկավարները հանդես եկան հայտարարությամբ, որտեղ Օսմանյան սահմանադրությանը հաջորդ տարիները բնորոշեցին որպես Հայ ազգային հուսախաբության շրջան, իսկ դրա բարձրակետը համարեցին Կիլիկիայի 1909 թ. կոտորածը: ՀՍՌԿ-ն խիստ կարևորում էր ինքնապաշտպանության գործի կազմակերպումը, որը սակայն, նրանց կարծիքով, գտնվում էր թերի վիճակում [3, էջ 129]: Ռամկավարներից շատերը, մասնավորապես՝ արմենական հատվածը, արևմտահայության ազատագրության հույսը շարունակում էր կապել Ռուսաստանի հետ:

Արևմտահայ իրականության մեջ բոլոր ուժերի համատեղման համար առաջին

աշխարհամարտի նախօրյակին ի նպաստ Հայկական հարցի, շարժում ծավալվեց: Պատրիարքարանը դատապարտում էր միջկուսակցական պայքարը [7, 1914, հունիս, էջ 522], «Մշակը» ողջունում էր համախմբման գաղափարը [11, 1913, նոյեմբեր 14, թիվ 254], «Արևելքը» ողջունելով շարժումը հայտարարում էր, որ այն ուժ կտա «*կուսակցությունների յարատևմանը և հզորացմանը» [9, 1914, դեկտեմբերի 31, թիվ 7220]:* Շարժմանը դրական արձագանքեցին ՀՅԴ-ն, Վերակազմյալները, ՀՍՌԿ-ն: Սակայն վերջինս ավելի հրատապ էր համարում ինքնապաշտպանության խնդիրը, որովհետև մտավախություն ուներ, որ 1894-96 թթ. նման հայկական բարենորոգումների վերաբերյալ համաձայնագրերը կարող են հանգեցնել «միեւնոյն արիւնոտ արդիւնքին» [6, 1914, հունվարի 21, թիվ 38]: Համախմբման այդ կոչերն ավարտվեցին ազգային կուսակցությունների համերաշխության մասին հայտարարություններով, հատկապես՝ բարենորոգումների իրականացման հարցում: Սակայն, իրականում նրանք այնքան էլ համերաշխ ու միասնական չէին:

Տասնամյակներ շարունակ հայ հասարակական քաղաքական շրջանակները, կապելով արևմտահայության բախտը Թուրքիայի դեմ մեծ տերությունների տարած հաղթանակի հետ, գտնում էին, որ պատմությունն իր արդար խոսքը պիտի ասի և հայերին ազատագրի նրա տիրապետությունից: Բայց ստեղծված իրավիճակը ստիպում էր նրանց տարբեր մարտավարություններ ընտրել:

ՀՍՌԿ-ն գիտակցելով, որ սկսված աշխարհամարտը թուրքերի համար կարող է հարմար առիթ դառնալ հայերի հետ հաշվեհարդար տեսնելու, ռուս-թուրքական պատերազմի սկզբում կանգնեց օսմանյան հայրենիքի պաշտպանության դիրքերում և կոչ արեց հայերին կատարել իրենց զիվորական պարտքը. «*Հրաժարիլ ընդմիշտ, պատերազմի միջոցին, ներքին վրդովիչ քաղաքականութենէ, այս կտվորեցնէ հայերուն ներկայ պատերազմի ընթացքին եվրոպական տերութիւններու որդեգրած ուղղութիւնը» [12, 1914, թիվ 43-92, էջ 460]:*

ՀՍՌԿ-ի կուսակցության ղեկավարությունը 1915 թ. գարնանը տեղափոխվեց Թիֆլիս և աշնանը ձեռնամուխ եղավ «Վան-Տոսպի» վերահրատարակությանը: Բախվելով երիտթուրքերի իրականացրած ցեղասպանության փաստին, ՀՍՌԿ-ն փոխեց իր տեսակետները Հայկական հարցի լուծման ուղիների մասին:

1915 թ. մայիսի 20-ին ՀՍՌԿ-ն և ՄԳՀԿ Ալեքսանդրիայում համաձայնագիր կնքեցին, որում ասվում էր. «երկու կողմերու մոտավոր նպատակն է ինքնավար Հայաստան և Կիլիկիա» [2, էջ 198; 10, 1950, հունիսի 2], որը պետք է դրվի Անտանտի կամ Ռուսաստանի հովանավորու-

թյան ներքո: Այսինքն՝ առաջարկվում էր ստեղծել Հայաստանի ինքնավարություն Ռուսական պետության կազմում: Համաձայնող կողմերը պատրաստվում էին գորակցել Պ. Նուբար փաշայի պատվիրակությանը, իսկ վերջինս՝ ապագա միջազգային վեհաժողովում, որպես հայկական պատվիրակության լիազոր ներկայացուցիչների, առաջարկելու էր երկու կողմերի թեկնածուներին [2, էջ 201]:

ՀՍՌԿ-ի տեսաբաններից Վարդան Պապիկյանն՝ արտահայտելով կուսակցության տեսակետը, «Հայկական հարցի շուրջ» վերլուծական հոդվածում հետադարձ հայացք էր նետում Հայկական հարցի անցած ուղու վրա և փորձում վերահիմաստավորել այն: Հեղինակը միանշանակ չէր տեսնում եվրոպական դիվանագիտության դերը հայկական խնդրում: Նա ո՛չ արդարացնում և ո՛չ էլ դատապարտում է նրա միջամտությունը, այլ ամեն ինչ տեսնում է իր տեղի ու ժամանակի համատեքստում: «Կարելի՞ է քննադատել օտար դիվանագիտությանը դիմելու հայերի քայլը», - հարցնում է Պապիկյանը, և ինքն էլ պատասխանում, որ մինչ եղեռնը չէր կարող հայ ժողովուրդը գուշակել ապագան: «Չէ՞ որ ժողովուրդներն ալ ունեն իրենց անփորձության շրջանները, որոնց մէջ նրանց գործած արարքները կարելի չէ չափել հետագա տարիների չափով», - գրում է հեղինակը և ավելացնում, որ Եվրոպան չի փրկելու իրենց, բայց «նրա սարսափն էր միայն, որ արգելում էր թուրքին մահացու վերջին հարուածը հասցնելու հայ ժողովրդի գլխին» [12, 1916, հունվարի 24]:

Հեղինակի կարծիքով կոտորածները տեղի էին ունենալու անկախ մեր պահվածքից, պարզապես «մեր պարտքն էր առավել զգոն լինել, որը չեղավ» [12, 1916, հունվարի 24]: Նկատենք, որ ռամկավարներն իրենց քննադատության մեջ մոռանում էին, որ հայության ճակատագիրը ոչ թե հայերն ու նրանց կուսակցություններն էին տնօրինում, այլ՝ ելնելով իրենց քաղաքական շահախնդրություններից, մեծ տերությունները:

Ռամկավարներին մտահոգում էր Թուրքիայի ապագա կառուցվածքը, որից անմիջականորեն կախված էր արևմտահայության ճակատագիրը: Այս հիմնահարցի մասին ՀՍՌԿ տեսաբան Միհրան Տամատյանը 1916թ. 'Արև' թերթում տպագրել է 'Ասիական Թուրքիո ապագան' հոդվածաշար: Նա գտնում էր, որ Թուրքիայի համար լավագույն կառուցվածքը նրա վերածումն էր Շվեյցարիայի տիպի մի պետության: Տամատյանը ցույց էր տալիս նաև, որ թուրքերը անկարող են հանդուրժելի պայմաններ ստեղծել հպատակ ժողովուրդների համար: Դրա համար անհրաժեշտ էր, որ Թուրքիայում նշանակվեն եվրոպական կառավարիչներ: Տամատյանը ցույց էր տալիս նաև, որ Եվրոպական պետությունների միջև կային լուրջ հակասություններ :

1916թ. «Արև» թերթում Տամատյանը քննարկման առարկա էր դարձնում նաև արևմտահայության քաղաքական կողմնորոշման հարցը: Նա ցույց էր տալիս, որ, անկախ ամեն ինչից, հայ ժողովրդի համակրանքը Ռուսաստանի կողմն էր [8, 1916, հոկտեմբերի 16]:

«Վան-Տոսպը» ևս շեշտում էր, որ արևմտահայությունն իր ազատագրության հույսը կապել էր Ռուսաստանի հետ. «Թուրքահայերը դեպի Ռուսաստան ունեցել են դարավոր անայլալ համակրանք և իրենց ակնկալություններն իրականացած տեսնելու հավանականությունը փնտրում են Ռուսաստանի մոտ» [12, 1916, օգոստոսի 28]:

Որպես հավատարմության գրավական, «Վան-Տոսպը» զգուշացնում էր հայերի երկարամյա դաշնակից Ռուսաստանին գրավյալ տարածքներում մնացած քրդերի մասին: Ծոցում պահված օձերի հետ էր համեմատում նրանց, ովքեր, ձևականորեն հայտնելով իրենց հնազանդությունը Ռուսաստանին, հարմար պահին սակայն «նամարդ բորենու նման հարձակվում են երեկվա իր կյանքը բաշխողի վրա, հոշոտում՝ նրան, կողոպտում, ջարդում առանց խնայելու և 'ավելի մեծ վտանգ էին դառնում բանակի համար, քան թե առջևի թշնամին» [12, 1916, օգոստոսի 7]:

1916 թ. անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի համաձայնագրով նախատեսվում էր, որ հաղթականի դեպքում Օսմանյան կայսրությունը տրոհվելու էր և դրա մաս կազմող Կիլիկիան անցնելու էր Ֆրանսիային, որն իր գաղութատիրական նկրտումները քողարկում էր տեղի հայերին ինքնավարություն շնորհելու խոստումով և, ընդառաջելով Պողոս Նուբարի առաջարկին, 1916 թ. նոյեմբերի 28-ին որոշեց հայ տարագիրներից Կիպրոսում կազմել գորաջոկատ «Արևելյան լեգեոն» անունով:

ՀՍՌԿ-ն, ողջունելով «Արևելյան լեգեոն» ստեղծման գաղափարը, Եգիպտոսի հայ կուսակցությունների հետ կազմում են Հայ ազգային միությունը, որի նպատակն էր գորավիզ լինել ֆրանսիական կառավարության վերոհիշյալ նախաձեռնությանը: 1917 թ. մարտի 16-26-ը Ամերիկայի հայկական կուսակցությունները (ՀՍՌԿ, ՀՅԴ, ՄԴՀ և Վերակազմյալ հնչակյան) ևս բանակցում և կազմում են Ամերիկայի հայ ազգային միությունը, որը դառնում է Ազգային պատվիրակության ներկայացուցիչն ԱՄՆ-ում:

ՀՍՌ կուսակցության վերաբերմունքը Հայկական հարցի նկատմամբ զգալի փոփոխություններ կրեց Ռուսաստանում տեղի ունեցած հեղափոխությունների և դրանց հետ կապված արմատական փոփոխությունների հետ: Այդ մասին կներկայացնենք հաջորդիվ:

Օգտագործված գրականություն ցանկ

1. **Գարբինեան Ա.**, Հայ ազատագրական շարժման օրերէն, Ե., 2003
2. **Լազեան Գ.**, Հայաստան և հայ դատը, Ե., 1991
3. **Տեփոյեան Պ.**, Ատոմ Ասլանեան, Պէյրուիթ, 1988
4. Հայ պարբերական մամուլը, մատենագիտական համահավաք ցուցակ 1794-1980, կազմեց Բարդույան Մ. Ա., Ե., 1986
5. ՌԱԿ վավերագրեր
8. «Արեւ»
9. «Արեւեք»
10. «Չարթօնք» օրաթերթ, Պէյրուիթ
11. «Մշակ» հասարակական-քաղաքական, գրական թերթ
12. «Վան-Տոսպ» գրական, գիտական, հասարակական-քաղաքական թերթ

Մամուլ

6. «Ազգ» շաբաթաթերթ
7. «Արարատ» ամսագիր

Տժանա/Հանձնվել է՝ 14.05.2022
Рецензирована/Գրախոսվել է՝ 24.05.2022
Принята/Ընդունվել է՝ 31.05.2022